ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՆԵՐԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԹԻՎ 2 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏ
«19» մարտի 2025 Թ. ԺԱՄԸ՝ 18:30

N	Խմբակցության անվանումը	Ավագանու անդամի ազգանունը, անունը, հայրանունը	Ստորագրությունը	Ստորագրման ժամը	Նշումներ
1	«Դավիթ Հարությունյան» կուսակցությունների դաշինք	Հարությունյան Դավիթ Խաչիկի			
2		Ավագյան Վարդան Արծրունու		18:30	
3		Բայաթյան Արշավիր Հրանտի		18:30	
4		Վարդանյան Արմեն Անտոնի	բացակա		
5		Հովհաննիսյան Ծովինար Լյուդվիգի		18:30	
6		Բաբայան Աստղիկ Հենրիկի		18 30.	
7		Սարգսյան Գրիգոր Ալբերտի		18:28	
8		Նազարյան Եղիշե Մովսեսի	բացակա		
9		Մկրտչյան Թամարա Վարբակեսի		18:30	
10		Սարգսյան Էմիլ Էմանուելի		18:34	
11		Սարգսյան Ծովինար Հայկի		18:32.	
12		Մովսիսյան Դավիթ Էդվարդի		18:25	
13		Հովհաննիսյան Նեկտար Ղևոնդի		18:30	
14		Վարդանյան Ռոմիկ Արմենի		18:30	
15	«Քաղաքացիական պայմանագիր»	Ներսիսյան Մուշեղ Գագիկի		18:31	
16		Ոսկանյան Սամվել Ռազմիկի		18 25	
17		Մարգարյան Սոնա Մոլոտի		18.30	
18		Մանասերյան Կարեն Մայիսի	բացակա		
19		Շահբազյան Մարատ Վոլոդյայի	բացակա		
20		Նազարյան Տիգրան Մովսեսի		18 30	
21	«Ապրելու երկիր»	Վարդանյան Վահե Հրաչիկի	բացակա		

Աշխատակազմի քարտուղար՝ _____ Մարինե Հովհաննիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ք. Եղեգնաձոր **19-ը մարտի 2025թ.**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 16 անդամներ:

Բացակա էին՝ Արմեն Վարդանյանը, Եղիշե Նազարյանը, Կարեն Մանասերյանը, Մարատ Շահբազյանը և Վահե Վարդանյանը:

Նիստին մասնակցում էին՝

Գլաձոր բնակավայրի վարչական ղեկավար Արման Մարտիրոսյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Արմեն Մարգարյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանը, համայնքի ղեկավարի առաջին տեղակալի օգնական Սամվել Օրդոյանը և համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Հարությունյանը

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու թիվ 7 նստաշրջանի երկրորդ՝ 2025 թվականի մարտի 19-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի մարտի 19-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:
3) Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեում վերաբաշխումներ կատարելու մասին:
4) Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին:
5) Եղեգնաձոր համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը և ձևը հաստատելու մասին:
6) Գետափ բնակավայրում նոր դպրոցի կառուցման համար համաձայնություն տալու մասին:
7) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 17-ի թիվ 44-Լ որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
8) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 17-ի թիվ 48-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
9) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 14-ի թիվ 62-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
10) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 17-ի թիվ 32 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին:
11) Համայնքային սեփականություն հանդիսացող 15 հա արոտավայրը պարզ գրավոր ձևով վարձակալության տրամադրելու համար համաձայնություն տալու մասին:
12) Հողի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
13) Հողի նպատակային նշանակությունը փոխելու համար համաձայնություն տալու մասին:
14) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու մասին:
15) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 9-ի թիվ 11-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
16) Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին մասնակցելուն և համաֆինանսավորումը ապահովելուն համաձայնություն տալու մասին:
17) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 21-ի թիվ 18-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
18) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 73-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
19) Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 30-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 83-րդ հոդվածի 2-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ համայնքի ավագանու անդամների կողմից ուսումնասիրության արդյունքում տրված եզրակացությունը (վերլուծություն)՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 31-Ն)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ և 33-րդ հոդվածի 4-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի հունվարի 21-ի թիվ 02-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ վերաբաշխումները.

1) Պակասեցնել՝

ա. գործառնական դասակարգման 11.01.02 (պահուստային ֆոնդ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից 27 900 000 (քսանյոթ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ,

բ. գործառնական դասակարգման 05.01.01 (սանմաքրում, աղբահանում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4511 (սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին) հոդվածից 34 883 076 (երեսունչորս միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար յոթանասունվեց) ՀՀ դրամ.

2) ավելացնել՝

ա. գործառնական դասակարգման 05.06.01 (շրջակա միջավայրի պաշտպանություն (այլ դասերին չպատկանող)) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4511 (սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական կազմակերպություններին) հոդվածին՝ 34 883 076 (երեսունչորս միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար յոթանասունվեց) ՀՀ դրամ՝ «Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ին շրջակա միջավայրի պահպանման և կանաչապատման աշխատանքների իրականացման ֆինանսավորման համար,

բ. գործառնական դասակարգման 05.01.01 (սանմաքրում, աղբահանում) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4213 (կոմունալ ծառայություններ) հոդվածին՝ 27 900 000 (քսանյոթ միլիոն ինը հարյուր հազար) ՀՀ դրամ «Մաքրություն» ՍՊԸ-ի միջոցով համայնքում սանիտարական մաքրման աշխատանքների իրականացման ֆինանսավորման համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 32-Ն)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին կետի, 82.1-ին հոդվածի 6-րդ մասի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի 2024 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 33-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, համաձայն նույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Հաստատել՝

1) Եղեգնաձոր համայնքում հանրային հավաքների մասին իրազեկման թերթիկի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի:

2) Եղեգնաձոր համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի վարման կարգը՝ համաձայն N 2 հավելվածի:

3) Եղեգնաձոր համայնքում հանրային հավաքների մասին իրազեկումների գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդ օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 34-Լ)*

ԼՍԵՑԻՆ.

ԳԵՏԱՓ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆՈՐ ԴՊՐՈՑԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով 2025 թվականի փետրվարի 14-ին Գետափ բնակավայրում անցկացված հանրային լսման արձանագրությունը և այն հանգամանքը, որ հանրային լսման արդյունքում բնակչության կողմից նախատեսվող գործունեությանը տրվել է դրական կարծիք.՝ **ավագանին ո ր ո շ ե գ**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (ՀՏԶՀ) կողմից նախատեսվող գործունեությանը, համաձայն որի նախատեսվում է Գետափ բնակավայրում կառուցել նոր դպրոց (հզորությունը՝ 288 աշակերտ):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 35-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 44-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին ո ր ո շ ե գ**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 17-ի՝ «Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի աղբահանության և սանիտարական մաքրման կառավարման տեղական պլանը հաստատելու մասին» թիվ 44-Լ որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 36-Լ)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի ԹԻՎ 48-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ **ավագանին որոշեց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի մայիսի 17-ի՝ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» թիվ 48-Ա որոշման հիմնական մասի 1-ին կետում «գյուղատնտեսական արտադրական» բառերը փոխարինել «արդյունաբերական» բառով, «գյուղատնտեսական արտադրանք վերամշակող տնտեսություն հիմնելու նպատակով» բառերը փոխարինել «ձկնաբուծական արհեստական լճակ կառուցելու նպատակով» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 37-Ա)*

<u>ԼՍԵՑԻՆ.</u>

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի ԹԻՎ 62-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթներով՝ **ավագանին որոշեց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 14-ի՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը փոփոխելու համար համաձայնություն տալու մասին» թիվ 62-Ա որոշման հիմնական մասի 1-ին կետում «1.61014» թիվը փոխարինել «1.60980» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 38-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 17-Ի ԹԻՎ 32 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 102-րդ հոդվածի 4-րդ մասով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 17-ի՝ «Եղեգնաձոր համայնքում սանիտարական մաքրումը և կենցաղային աղբահանությունը «Եղեգնաձորի համայնքային տնտեսություն» ՀՈԱԿ-ի միջոցով իրականացնելու մասին» թիվ 32 որոշումը ճանաչել ուժը կորցրած:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 39-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 15 ՀԱ ԱՐՈՏԱՎԱՅՐԸ ՊԱՐԶ ԳՐԱՎՈՐ ՁԵՎՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի N 1477-Ն որոշումը և քաղաքացի Մրազ Սլոյի Համզոյանի դիմումը՝ **ավագանին որոշեց**.

1. Տալ համաձայնություն Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող («Սանդուքար» հանդամաս), համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության արոտավայրերից 15 հա, 1 (մեկ) ամիս ժամկետով, պարզ գրավոր ձևով քաղաքացի Մրազ Սլոյի Համզոյանին վարձակալության տրամադրելու համար:

2. 15 հա արոտավայրի 1 (մեկ) ամսվա վարձավճարը սահմանել 18 000 (տասնութ հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 40-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի, 7-րդ հոդվածի 15-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի հունիսի 17-ի N 987-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետի 4-րդ ենթակետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի ապրիլի 15-ի N 600-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 3-րդ կետը և քաղաքացի Լևոն Խաչատրյանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի Գետափ բնակավայրի վարչական տարածքում գտնվող, քաղաքացի Լևոն Գարիկի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող, գյուղատնտեսական նշանակության 0.06 հա վարելահող հողատեսքի (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 15032024-10-0021, կադաստրային ծածկագիր՝ 10-014-0056-0028) նպատակային նշանակությունը փոխել՝ դարձնելով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության տնտեսություն հիմնելու նպատակով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 41-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ, 31-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, ժողովրդական պատգամավորների Եղեգնաձորի ավանային խորհրդի սեփականաշնորհման հանձնաժողովի 1992 թվականի ապրիլի 10-ի արձանագրությունը և ժառանգ Աղվան Բաբայանի դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Տալ համաձայնություն՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Զ. Անդրանիկի փողոց 2-րդ նրբանցք, 18 հասցեում գտնվող, հանգուցյալ Օսիկ Ռուբենի Բաբայանին հատկացված, շինությամբ ծանրաբեռնված, 0.00832 հա մակերեսով հատուկ նշանակության հողի նպատակային նշանակությունը փոխելու արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների կատեգորիա, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 42-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ԱՐՄԵՆ ԱՂԱՋԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարել՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 43-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 9-Ի ԹԻՎ 11-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Եղեգնաձոր համայնքի ավագանու խմբակցությունների ղեկավարների գրությունները՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 9-ի՝ «Ավագանու մշտական գործող հանձնաժողովների անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 11-Ա որոշման՝

1) N 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 1-ի,

2) N 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 2-ի,

3) N 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 3-ի,

4) N 4 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված N 4-ի,

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 44-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԳՈՐԾԱԴՐՎՈՂ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒՆ ԵՎ ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ ԱՊԱՀՈՎԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 25-րդ և 42-րդ կետերի պահանջներով, համաձայն նույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի և 13-րդ հոդվածի 10-րդ մասի՝ **ավագանին ո ր ո շ ե ց**.

1. Համաձայնություն տալ Եղեգնաձոր համայնքի մասնակցությանը Գերմանական միջազգային համագործակցության ընկերության կողմից գործադրվող Տեղական զարգացման հիմնադրամի շրջանակներում դրամաշնորհային մրցույթին:

2. Դրամաշնորհային մրցույթին ներկայացվող ծրագրային հայտ-առաջարկի հաստատման դեպքում Եղեգնաձոր համայնքի 2025 թվականի բյուջեից կատարել համապատասխան համաներդրումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 45-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 21-Ի ԹԻՎ 18-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին որոշեց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2025 թվականի փետրվարի 21-ի՝ «Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» թիվ 18-Ա որոշման հիմնական մասի 1-ին և 2-րդ կետերը շարադրել ստորև բերված նոր խմբագրությամբ՝

«1. Եղեգնաձոր համայնքի սեփականություն հանդիսացող, քաղաք Եղեգնաձոր Գլաձորյան փողոց 2/9/1 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 17022025-10-0007), քաղաք Եղեգնաձոր Գլաձորյան փողոց 2/9/2 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07062021-10-0009) և քաղաք Եղեգնաձոր Գլաձորյան փողոց 2/9/3 (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 07062021-10-0013) հողամաս հասցեներում գտնվող անշարժ գույքերը (խաղահրապարակ)՝ վերակառուցելու և պահպանելու նպատակով, 10 (տասը) տարի ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով օգտագործման տրամադրել «Եղեգ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպությանը:

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ «Եղեգ» բնապահպանա-սոցիալական հասարակական կազմակերպության հետ կնքել անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագրեր՝ պարտավորեցնելով տարածքի բարեկարգումն ու խաղահրապարակի կառուցումն իրականացնել պայմանագրերը կնքելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 46-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի ԹԻՎ 73-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի դրույթներով՝ **ավագանին որոշեց**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 8-ի՝ «Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման համար մրցութային հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 73-Ա որոշման հիմնական մասի 1-ին կետը շարադրել ստորև բերված նոր խմբագրությամբ՝

«1. Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով մրցույթների կազմակերպման և անցկացման համար ստեղծել մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

- Աճուրդավար - Արմեն Աղաջանյան (Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ)
- Արձանագրող - Սամվել Այվազյան (Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ)
- Գառնիկ Խաչատրյան (Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնակատար)
- Արսեն Կարապետյան (Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ)
- Սյուզաննա Մարգարյան (Եղեգնաձորի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի առաջատար մասնագետ)
- Գրիգոր Սարգսյան (համայնքի ավագանու անդամ)
- Սամվել Ոսկանյան (համայնքի ավագանու անդամ)
- Վահե Վարդանյան (համայնքի ավագանու անդամ):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2025 թվականի փետրվարի 7-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 47-Ա)*

ԼՍԵՑԻՆ.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին ո ր ո շ ե գ**.

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշել՝ 2025 թվականի ապրիլի 14-ը, ժամը՝ 18:30-ը, նիստի անցկացման վայրը՝ Եղեգնաձորի համայնքապետարան:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. *(կցվում է որոշում N 48-Ա)*

Նիստին ներկա ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ՆԵԿՏԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ _____

ՌՈՄԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՄՈՒՇԵՂ ՆԵՐՍԻՍՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ _____

ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը

_____